ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

## ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ / ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

**Դիտորդ մարմնի կազմը**

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստատեսություն» ՓԲԸ-ի տեղեկատվական վեճի վերաբերյալ

### Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2023թ. մարտի 10-ին Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ստացել է «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ տնօրեն Շանթ Շահնազարյանի բողոքը Հանրային հեռուստաընկերության Առաջին լրատվական ալիքի «Հարցազրույց Աննա Դանիելյանի հետ» հաղորդաշարի 2023թ. փետրվարի 22-ի թողարկման առնչությամբ: Բողոքում, մասնավորապես, ասված է. *«…հաղորդաշարի ընթացքում առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ տնօրեն Նարեկ Մանուկյանը կատարել է իրականությանը չհամապատասխանող արտահայտություն առ այն, որ ԻՐԱ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՓԲԸ կողմից շահագործվող սարքը չի ապահովում ոլորտի ժամանակակից բոլոր պահանջներին»:*

2. «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ն ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին ուղղած բողոքում տեղեկացրել է, որ 2023թ. փետրվարի 27-ին գրությամբ դիմել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանին և նշել, որ *«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ տնօրեն Նարեկ Մանուկյանի հնչեցրած արտահայտությունը չի համապատասխանում իրականությանը և արատավորում է «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ի գործարար համբավը»:* Նա ակնկալել է, որ կհրապարակվի «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ի պատասխան հերքումը: Հերքման պահանջում նշված է նաև, որ *«հարցը կարևոր է նաև առողջապահության տեսանկյունից, որովհետև «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ում քաղցկեղի դեմ բուժվում են բազմաթիվ հիվանդներ, և ընկերությունը տարիների կատարած ծանր աշխատանքի արդյունքում է ձեռք բերել*

*հիվանդների վստահությունը»*:

3. 2023թ. մարտի 7-ին «ԻՐԱ Մեդիքլ Գրուպը» ստացել է Հայաստանի հանրային հեռուստաընկերության տնօրեն Հովհաննես Մովսիսյանի պատասխան գրությունը, որում ասվում է. «*... Տվյալ պարագայում, քննարկվող դեպքը չի հանդիսանում Առաջինի լրատվական ալիքի տարածած տեղեկատվություն, այլ՝ Առաջինի լրատվական ալիքի «Հարցազրույց Աննա Դանիելյանի հետ» հաղորդաշարի շրջանակներում՝ «Հարցազրույց Նարեկ Մանուկյանի հետ» խորագրով հաղորդման հյուրընկալած անձի՝ Նարեկ Մանուկյանի կողմից արտահայտված կարծիք /տեսակետ*»:

4. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին ուղղած բողոքում «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ն նշում է. *«Մեր ընկերությունը համաձայն չէ Հանրային հեռուստաընկերության դիրքորոշման հետ, և ըստ մեզ՝ մեր դիմումին համարժեք պատասխան չի տրվել, քանի որ չեն պահպանվել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կանոնը, ինչպես նաև [Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի](#) հետևյալ դրույթները.*
*6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից, 6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռնելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում»:*

5. 2023թ. ապրիլի 17-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի առցանց նիստի մասնակիցները նշել են, որ «ԻՐԱ Մեդիքլ Գրուպ» ՓԲԸ-ի և Հանրային հեռարձակողի վեճը կրում է ոչ միայն էթիկական, այլ նաև իրավաբանական բնույթ: Որոշվել է բողոքի կապակցությամբ դիմել Տեղեկատվական վեճերի խորհրդին (ՏՎԽ)՝ փորձագիտական կարծիք/եզրակացություն կայացնելու համար:

6. 2023թ. մայիսի 23-ին ՏՎԽ-ն ներկայացրել է իր կարծիքը, որտեղ մասնավորապես ասված է. «... «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքել իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել հրապարակման մեջ: Ըստ այդ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ լրատվական գործունեություն իրականացնող է համարվում այն իրավաբանական կամ ֆիզիկական անձը, նաև՝ անհատ ձեռնարկատերը, որն իր անունից տարածում է լուր: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ հեռուստառադիոհաղորդումը լրատվության միջոց է, այդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ լրատվությունն

իրականացվում է տեղեկությունների տարածումով։

Վերը նշվածից բխում է, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ է և այդ գործունեությունն իրականացնում է՝ հեռուստահաղորդման միջոցով տարածելով տեղեկություններ։ Այս օրենսդրական կարգավորումը կիրառելով տվյալ տեղեկատվական վեճին վերաբերող փաստերի նկատմամբ՝ արձանագրում ենք, որ խնդրո առարկա հարցազրույցը տարածողը Հայաստանի հանրային հեռուստաընկերությունն» է (այսուհետև՝ Հեռուստաընկերություն), ինչից էլ հետևում է, որ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քաղաքացու բողոքի հասցեատերը Հեռուստաընկերությունն է։ Այս իմաստով՝ Տեղեկատվական վեճերի խորհուրդը չի կարող համաձայնել Հեռուստաընկերության հետ, որ Հեռուստաընկերությունը պատասխանատու չէ վիճահարույց տեղեկությունները տարածելու համար։ Տվյալ դեպքում Հեռուստաընկերությունն է հանդիսացել այն լրատվական գործունեություն իրականացնողը, որն իր եթերով հեռարձակել է խնդրո առարկա նյութը։ Հետևաբար, եթե հետագայում դատական կամ արտադատական կարգով հաստատվի, որ վիճահարույց հայտարարությունը պարունակում է փաստացի անճշտություն, Հեռուստաընկերության մոտ ծագելու է հերքման կամ պատասխանի հրապարակման հնարավորություն ընձեռնելու օրենքով սահմանված պարտականություն՝ ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի։

Այդուհանդերձ, նշվածից չի բխում, որ իր տարածած փաստացի անճշտությունների համար Հեռուստաընկերությունը ինքնաբերաբար կրում է պատասխանատվություն և հերքում կամ պատասխան հրապարակելու պարտականություն։ ՏՎԽ-ն իր նախկին եզրակացություններում բազմիցս նշել է, որ լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է պատասխանատվությունից, եթե տեղեկությունը տարածել է բարեխղճորեն։ Դա սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասում, համաձայն որի՝ *«անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները … այլ անձի հրապարակային ելույթի, … բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին)»։*

Այս օրենսդրական հիմքը միջազգային իրավունքում հայտնի է «բարեխիղճ հրապարակում» կամ «ողջամիտ հրապարակում» իրավական եզրույթներով, որոնք հավասարապես տարածվում են նաև այնպիսի իրավահարաբերությունների վրա, որոնք ձևավորվում են լրագրողի կողմից հարցազրույց վերցնելիս՝ հանպատրաստից կամ հեռուստաընկերության ստուդիայում հյուրի հետ զրույց վարելիս։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում նշել է, որ հարցազրույցների

եղանակով նորություններ տարածելը՝ խմբագրված եղանակով, թե՝ ոչ, համարվում է մամուլի կողմից «հանրային հսկող շան» իր կենսական դերակատարման ամենակարևոր եղանակներից մեկը, և լրագրողին պատասխանատվության ենթարկելը այն բանի համար, որ այլ անձի օգնել է տարածել հարցազրույցի ժամանակ արած իր հայտարարությունները, լրջորեն կվտանգի հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի մասին հանրային քննարկման ծավալման գործում մամուլի ներդրումները:[1]

Միակ բացառությունն է, երբ լրագրողը կամ լրատվամիջոցը չի գործել բարեխղճորեն՝ այնպիսի հետևողական ջանասիրությամբ, որը պահանջվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ պատասխանատու լրագրությամբ:[2] Այդ հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե լրագրողը ձգտե՞լ է կամ հարցազրույցը վարե՞լ է հավասարակշված կերպով: Այդ առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շեշտել է, որ «օբյեկտիվ» և «հավասարակշված» լրատվություն հաղորդելու (տվյալ դեպքում՝ նաև հարցազրույց վարելու) մեթոդները բազմազան են, և դրանք կախված են, ի թիվս այլ հանգամանքների, նաև լրատվության միջոցներից: Այդ առումով տվյալ մեթոդը կամ այլ կերպ ասած՝ լրատվական նյութը մատուցելու եղանակը ընտրելու իրավասությունը լրագրողներինն է, ոչ թե դատարաններինը, որոնք չեն կարող հարցազրույց վերցնող լրագրողի փոխարեն որոշել, թե լրատվության ինչ տեխնիկա պետք է օգտագործվեր տվյալ հանգամանքում:[3]

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Խորհուրդը համարում է, որ տվյալ դեպքում ոչինչ չի վկայում, որ զրույցը վարելիս լրագրողը գործել է անբարեխղճորեն, չի դրսևորել ջանասիրություն ու չի ցուցաբերել հավասարակշռված մոտեցում: Հարցազրույցը վերաբերել է նեղ մասնագիտական ոլորտի, որի բոլոր մանրամասներին լրագրողը պարտավոր չէր տիրապետել և հարկ եղած դեպքում հարցականի տակ դնել որոշ պնդումներ: Նման պարտականություններ սահմանելը նույնպես անհարկի կծանրաբեռնի լրագրողի աշխատանքը ու կազդի տեղեկատվության ազատ հոսքի վրա: Ամենակարևորը, որի վրա ուշադրություն է դարձնում ՏՎԽ-ն, այն է, որ լրագրողը չի փորձել անհարկի սահմանափակել հարցազրույց տվողի՝ տեղեկություններ տարածելու հնարավորությունները, միջամտությունները կատարվել են հարցազրույցը վարելու նպատակով, որի մեթոդը և եղանակը որոշում է միայն լրագրողը: Նման պայմաններում Հեռուստաընկերությունը չի կրում հերքում կամ պատասխան հրապարակելու հնարավորություն տրամադրելու պարտականություն՝ ըստ «Զանգվածային

[1] *BJÖRK EIÐSDÓTTIR – ն ընդդեմ Իսլանդիայի*, 46443/09, 10/07/2012, կետ 80:
[2] Տե՛ս նույն դատական ակտը՝ կետ 82-ում:
[3] *ERLA HLYNSDÓTTIR-ն v. Իսլանդիայի*, 43380/10, 10/07/2012, կետ 70:

լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, և համապատասխան որոշումը կայացնում է սեփական հայեցողությամբ: Խորհուրդը նաև նկատում է, որ ի տարբերություն «Զանգվածային լրատվությաան մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հերքում հրապարակելու դրույթների, պատասխան հրապարակելու պարտականության հիմքերը, որոնք նախատեսված են նույն հոդվածի 5-րդ մասում, պարզորոշ ու հստակորեն ձևակերպված չեն: Մասնավորապես, սահմանված չեն, թե որոնք են պատասխան հրապարակելու պարտականության ծագման հիմքերը, և այդ պարտականությունն առաջանո՞ւմ է այն դեպքում, երբ լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկության մեջ տեղ է գտել անճշտություն: Նույնիսկ եթե տրամաբանորեն կարելի է եզրահանգել, որ պատասխանի հնարավորություն տրամադրելու պարտավորության հիմքերը նույնն են, ինչ հերքում հրապարակելունը, վերոհիշյալ 5-րդ մասի ձևակերպման անորոշությունը հանգեցրել է իրավակիրառ պրակտիկայում պատասխանի իրավունքի իրականացման հետ կապված անորոշության: Դա ակնհայտորեն դրսևորվել է նաև սույն վեճի շրջանակում...»:

## Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

### I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը:

1.4. Փաստերի և տեղեկությունների շարադրանքը հստակ սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռել բոլոր նրանց, որոնց հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտել ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

## Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

- Դիտորդ մարմինը չի արձանագրել Լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի վերը թվարկված դրույթների խախտում: Հեռուստաընկերության ներկայացուցիչների գործողությունները չեն հակասում Կանոնագրի 1.2 և 1.4 դրույթներին, որոնցով կարող էր քննարկվել այս տեղեկատվական վեճը:
- Լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 6.4 կետի խախտում կա Հանրային հեռուստաընկերության՝ «ԻՐԱ Մեդիքլ Գրուպին» ուղղած պատասխան-նամակում, որտեղ հեռուստաընկերությունը, ըստ ՏՎԽ կարծիքի՝ սխալ է մեկնաբանում ՀՀ օրենսդրությունը և բողոքող կողմին տալիս է անորոշ պատասխան:
- Քաղաքացիների և կազմակերպությունների դիմումների ու բողոքների առնչությամբ ԶԼՄ-ների բարեխիղճ և պատասխանատու աշխատանքը դիտարկելով որպես ինքնակարգավորման կարևոր տարր, նաև հաշվի առնելով, որ այս վեճում ներգրավված է Հանրային հեռարձակողը, Դիտորդ մարմինը չի սահմանափակվել լոկ օրենսդրական պահանջները քննելով, այլ վիճարկված խնդրի ավելի խորը՝ մեթոդաբանական բնույթի վերլուծություն է կատարել: Ուստի ԴՄ-ն առաջարկում է միջազգային դրական փորձի վրա հիմնված տարբերակներ, որոնք կարող են կիրառվել նման դեպքերում:
- Մասնավորապես, ԴՄ-ն համարում է, որ Կանոնագրի 6.1., 6.2., 6.4. կետերը թույլ են տալիս հեռուստաընկերությունից նախնառաջ ակնկալել օրենսդրությանը համապատասխանող (տե՛ս ՏՎԽ վերոբերյալ կարծիքը), բայց նաև՝ իրավիճակը հանգուցալուծելու ավելի մեծ պատրաստակամություն, առնվազն՝ «Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի» տնօրեն Նարեկ Մանուկյանի հետ հարցազրույցի ընթացքում հնչած կարծիքին առնչվող ալտերնատիվ տեղեկությունը լսարանին տրամադրելու առումով: Հատկապես որ խոսքը հանրային մեծ կարևորություն ունեցող խնդրի՝ ուռուցքաբանական հիվանդությունների արդյունավետ ախտորոշման և բուժման մասին է:
- Այս և այլ կարևոր հարցերի վերաբերյալ քաղաքացիների լիարժեք տեղեկացումն ապահովելու համար Հանրային հեռարձակողը կարող է լսարանի, շահագրգիռ անձանց հետ հետադարձ կապի տարբեր ձևեր կիրառել՝ ներկայացնելու համար հեռարձակված հաղորդումների վերաբերյալ նրանց արձագանքները: Օրինակ, որևէ հաճախականությամբ կարող են հեռարձակվել հանրության առավել արդիական և խելամիտ առաջարկների, մեկնաբանությունների և բողոքների տեսություններ և մեկնաբանություններ: Իհարկե, ոչ բոլոր

արձագանքներն են տեղին և իրատեսական՝ այս կամ նմանատիպ այլ ձևաչափով ներկայացվելու համար: Սակայն «ԻՐԱ Մեդիքլ Գրուպի» դիրքորոշումն արժանի էր հնչեցվելու և կարող էր հնչեցվել:

Թերևս սա կլինի այս տեղեկատվական վեճը լուծելու լավագույն միջոցը:

- Մինչդեռ, պատշաճ ուշադրություն չդարձնելով «ԻՐԱ Մեդիքլ Գրուպի» պահանջին, Հանրային հեռարձակողը նույնիսկ չի օգտվել առիթից, երբ «Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի» տնօրեն Նարեկ Մանուկյանի հետ 3 ամիս անց հարցազրույց է վարել Հանրայինի մեկ այլ լրագրող՝ մեկ այլ հաղորդաշարով (Նիկոլայ Մելիքյանը՝ «Բաց հարթակ» հաղորդաշարով, 2023թ. մայիսի 20-ին): ԴՄ-ն համաձայն է «Հարցազրույց Աննա Դանիելյանի հետ» հաղորդաշարի 2023թ. փետրվար 22-ի թողարկման առնչությամբ ՏՎԽ դիտարկմանը, որ լրագրողը պարտավոր չէր իմանալ մասնագիտական ոլորտի բոլոր մանրամասները և նույն պահին հարցականի տակ դնել որոշ պնդումներ: Սակայն ԴՄ-ն համարում է, որ այդ հաղորդման վիճարկումից 3 ամիս անց «Բաց հարթակ» հաղորդաշարի թողարկումը պատրաստած խմբագրությունը կարո՞ղ էր տեղյակ լինել վիճարկման հանգամանքներին, հաշվի առնել շահագրգիռ բժշկական հաստատության պահանջը և որևէ կերպ անդրադառնալ վիճահարույց խնդրին՝ դրանով իսկ հեռուստադիտողին տեղեկացնելով այլընտրանքային կարծիքի մասին:

*Հիշեցում.* Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնել Դիտորդ մարմնի եզրակացությունները հրապարակել իրենց լրատվամիջոցներով, քանի որ ընդունել են, որ իրենց իսկ ընտրած Դիտորդ մարմինն իրավասու է քննել իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին:

*Վերապահում.* Հանրային հեռարձակողը կարող է հրապարակել այս հանգամանալից Եզրակացության միայն այն մասը, որն ուղղակիորեն առնչվում է տեղեկատվական վեճի իրավական ասպեկտին և մասնագիտական էթիկայի նորմերին:

**Ընդունվել է 2023 թ. հունիսի 2-ին,**
**ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով**

**Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**, «Մեդիամաքս» լրատվական գործակալության

գլխավոր խմբագիր
**Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ**, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
**Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
**Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ**, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
**Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**, «Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
**Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**, Երևանի մամուլի ակումբի նախագահ
**Նունե ՍԱՐԳՍՅԱՆ**, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
**Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ**, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր, պրոդյուսեր
**Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ**, Media.am-ի պրոդյուսեր

*ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 71-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:*